

ԿՐԹ ՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅՆԿԱՆ

ԳՈՂԳՈԹԱՅԻ ԽԱԶԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ

«Զի դուք երթայցէք եւ պաղարկեք լինիցիք
եւ պտուղն ձեր կացցէ» (Յովհ. Ժե. 16):

Պատուդ տալն աշխարհի մէջ անպայման մի օրէնք է։ Ամէն մի սերմ, որ ձգւում է հողի մէջ պիտի ծլի, ծաղկի, իսկ դրա անպայման հետեանքն է պատուդ տալը։ Կեանքի մէջ սկսած որ և է նոր գործ պէտք է իւր նպատակակէտն ունենայ, որին նա անդադար ձգտելուց յետոյ, երբ հասնում է իւր նպատակին, ասում ենք, այդ գործը պատուդ տուեց։ Միևնոյն ժամանակ պատուդ տալը մի սուրբ օրէնք է, որ հաստատուած է նախախնամութիւնից. «Աճեցէք և բազմացարուք», խօսքերով օրհնեց Աստուած բոլոր արարածներին, սրոնց մէջ նաև մարդուն, որ աճի բազմանայ և պատուդ տայ։

Պատուդ տալը յարատեութեան մի նշան է։ Եթէ պատմութիւնը այսօր մեր առաջ է դնում մեծամեծ գործերի յիշատակներ, եթէ մենք այսօր ողևորւում ենք և մի երկնային զգացմունքով լցւում Ս. Վարդանանց քաջագործութեանց պատմութիւնը կարդալով, եթէ մարդկութիւնը անկորուստ է պահել պատմութեան մէջ կատարուած մեծամեծ հրաշքներն ու զիւտերը, — այդ նշանակում է, որ այդ դէպքերը մարդկանց սրտերում մի անդամ հաստատուն արմատ բռնելուց յետոյ, աճել և բազմացել են ու մարդկութեանը զրաւելով՝ իրենց յետևից տարել, որ պատմական այդ մեծ ճշմարտութիւնները մարդկանց սրտերում ծլել, ծաղկել և պատուդ են տուել։ Բայց, արդեօք ամէն գործ էլ պատու է տալիս։

Մեր Տէր Յիսուս Քրիստոս մատնութիւնից առաջ իւր աշակերտներին հրաժեշտ տալով և խրախուսելով, որ չվհատեն մինչև Ս. Հոգին կրնդունին, աւելացրեց, «Զի

դուք երթայցէք և պտղաբերք լինիցիք և պտուղն ձեր կացցէ»։ Արդեօք այդ ինչ պտղի մասին էր խօսում Քրիստոս, արդեօք ինչ գործ պիտի կատարէին այդ Գալիլէացի ուսմիկ ձկնորսները, որ պտղաբեր լինէին, և այդ պտուղը պէտք է յարատե լինէր՝ «և պտուղն ձեր կացցէ»։

Մարդկութեան պատմութեան մէջ ամենամեծ յեղափոխութիւն ձգել է քրիստոնէութիւնը։ Մի այնպիսի ժամանակ, երբ մարդկութիւնը երես էր դարձրել իւր Արարչից և մի խոր անդունդ էր բացուել մարդու և Աստուծոյ մէջ, հանդէս է դալիս քրիստոնէութիւնը, օտարացած մարդու երեսը կրկին անդամ դէպի իւր Ստեղծողն ուղղելու և նրա առաջ դէպի երկնային թաղաւորութիւնը ճանապարհ հարթելու։ Քրիստոնէութեան հանդէս դալը մի անսպասելի երևոյթ չէր շատ շատերի համար։ Դեռևս շատ դարեր առաջ Յակովբ հայրապետը մխիթարում էր իւր որդւոց ասելով. «Մի պակասեացէ իշխան ի Յուդայ, և մի պետ յերանաց նորա, մինչև եկեսցէ նա, որոյ իւրն է հանդերձեալքն և նա է ակնկալութիւն հեթանոսաց. (Ծննդ. խթ. 10)։

Քրիստոնէութեան հանդէս դալու ժամանակ հստիմէական պետութեան մէջ բոլոր ժողովուրդներն էլ գեղիսութեան ու շփայտութեան մէջ էին թաղուած։ Ժամանակի ոգին և մարդկութիւնը այնպէս էին տարուած աշխարհի վայելքներով, որ քրիստոնէութեան էութիւնը, նրա բարձր, փրկարար սկզբունքները շատերին միանգամայն անմատչելի պիտի լինէին. Մարդիկ այլ կերպ էին մտածում ու խորհում քան քրիստոնէութիւնն էր նրանց առաջարկում, բոլորովին այլ գաղափար ունէին Քրիստոսի մասին, և այլ սպասելիքներ նրանից։ Այս գաղափարների տարբերութեան հետևանքն է լինում, որ Քրիստոս, աշակերտները և քրիստոնէութիւն խիստ հալածանքի են ենթարկւում։ Սակայն բազմութեան մէջ կային շատ շատ անհատներ էլ, որոնք ընդունակ էին ըմբռնելու և հասկանալու Քրիստոսի քարոզած սկզբունքները, թափանցելու նրանց մէջ և տեսնելու այն անդունդը, որ բացուած էր մարդու

առաջ երկու ճանապարհների մէջ, որոնցից մէկը աշխարհն էր առաջարկում, միւսը Քրիստոս, որ տանում էր դէպի փրկութիւն, դէպի երջանկութիւն: Ահա այս մարդիկն էին, որոնք շարունակ Քրիստոսի հետ էին, որոնց և Քրիստոս սիրում էր, զգւում էր և պատրաստում իրենց ապագայ կոչման համար: Սակայն այստեղ մենք կրկնակի երևոյթ ենք տեսնում: Քրիստոսի աշակերտներն ու նրան շրջապատողներն անգամ դեռ ևս զտնւում էին ժամանակի ոգու ազդեցութեան տակ. նրանք նոյն ժամանակի որդիքն էին, ինչ որ իրենց նախորդները: Ուստի, թէպէտև նրանք տեսնում և հասկանում էին Քրիստոսի քարոզած սկզբունքների գերազանցութիւնը և դէպի յաւիտենական փրկութիւն տանելը, այնուամենայնիւ նրանք մի աչքով դեռ ևս յետ են նայում, դեռ ևս նրանք պահանջում էին այն, ինչ որ ժամանակն ու շրջապատն էր պահանջում, այն է, որ հանդերձեալում կատարուելիք Քրիստոսի խոստումները հէնց այժմ այստեղ երկրի վերայ կատարուէին:

Սակայն քրիստոնէութեան նպատակն այլ էր: Նա մի մեծ պարտք ու սուրբ նպատակն ունէր կատարելու աշխարհիս վերայ, — ոտի կանգնեցնել անկեալ մարդկութեանը, խորտակել մինչև այդ ժամանակ նրան շղթայող կապանքները, դարձնել նրա երեսը դէպի իւր Աստուածը, վերստին հիմք դնել և ամրապնդել սիրոյ կապերը իւր Արարչի հետ: Քրիստոնէութիւնը ամբողջովին սէր է, և հանդէս գալով պէտք է հուր ձգէր և բռնէր ամբողջ աշխարհը: Այդ սիրոյ պատկերն ենք տեսնում Քրիստոսի ամբողջ գործունէութեան մէջ: Նրա ամէն մի ասած խօսքը, կատարած գործը ամբողջովին սէր էր բղխում, սէր-որին մարդկութիւնը կարօտում էր, սակայն ընդունակ չեղաւ հասկանալու և ըմբռնելու Փրկչի քարոզած վեհ գաղափարները: Քրիստոս այս երկնային սիրով կապեց իւր աշակերտներին իրեն և Աստուծոյ հետ և սուրբ աւանդ թողեց այդ նոյն սիրով կապել և ամբողջ մարդկութիւնը Աստուծոյ հետ:

Բայց մի՞թէ հեշտ գործ էր այդ իրագործելը, մի՞թէ այդ Գալիլէացի ձկնորսները կերազէին թէ իրենք ընդունակ

պիտի լինեն այդ վեհ գաղափարը իրականութիւն դարձնելու, քանի որ նրանց հոգւոյ աչքերը դեռ ևս կատարելապէս չէին բացուած: Նրանք դեռ ևս յոյս ունէին այս անցաւոր աշխարհում ստանալ այն բոլոր բարիքները, որ խոստանում էր նրանց իրենց վարդապետը: Ահա այսպիսի մի ժամանակ Քրիստոս աշակերտներին առաջ մի ուղի է գծում, մի ճանապարհ է ցոյց տալիս, որով նրանք պէտք է գնային: Փրկիչը մինչև ազամ որոշակի ասում է թէ աշակերտները այդ ճանապարհի վերայ ի՞նչ գործ պիտի կատարէին. «Զի դուք երթայցէք և պտղաբերք լինիցիք և պտուղն ձեր կացցէ» (Յովհ. ԺԵ. 16): Նրանք, այդ Գալիլէացի ձրկնորսները պէտք է գնային և պտղաբեր լինէին. ի՞նչպիսի վեհ գործ է, եթէ մարդ պտուղ տալ կարողանայ: Բայց մի՞թէ ամէն մարդ կարող է պտուղ տալ, մի՞թէ ամէն մարդու յաջողում է անցնել այն փշոտ ասպարէզը, որ կեանքը նրա առաջ է դնում: Եւ մի՞թէ ամէն ցանած սերմ պտուղ է տալիս, ամէն մի աշխատանք յաջողութեամբ է պսակւում: Բայց այն սերմերը, որ պէտք է առաքեալները ցանէին, պէտք է պտուղ տային, որովհետև նրանք ոչ թէ իրենց հոգւոյ թելադրութեամբ էին գործում, այլ առաքեալների մէջ բնակուած Փրկչի հոգւոյ, և եթէ մէկը չունէր Քրիստոսի հոգին, նա գործել էլ չէր կարող, որովհետև՝ «եթէ ոք զհոգի Քրիստոսի ոչ ունի, սա չէ նորա»: (Հռովմ. Ը. 9.): Եւ այս հոգին է, որ գտնւում է բոլոր հաւատացեալների մէջ, որոնց բոլորին ընդունակութիւն է տալիս ազատ լինելու մեղքից և իրաւունք է տալիս Աստուծոյ որդեգիր լինելու. «Զի ոչ առէք զհոգին ծառայութեան միւս անգամ յերկիւղ, այլ առէք զհոգին որդեգրութեան, որով աղաղակեմք՝ արբան, Հայր: (Հռովմ. Ը. 15):

Եւ ահա մենք տեսնում ենք Քրիստոսի աշակերտներին կեանքի ասպարէզում: Փրկչի տուած պատուէրը՝ «Զի դուք երթայցէք և պտղաբերք լինիցիք», մղում է նրանց դէպի աշխարհի ամէն կողմ: Առաքեալները անվեհերութեամբ կեանքի մէջ են մտնում և առ ոչինչ համարում աշխարհի տանջանքները: Այս ի՞նչ փոփոխութիւն էր, որ նրանց մէջ տեղի ունեցաւ. մի՞թէ սրանք այն խեղճ գա-

լիլէացիները չեն. «Ո՞չ աւասիկ ամենեքեան սոքա որ խօսինս՝ Գալլիլէացիք են», (Գործք առ. Բ. 7.), ասում էին հրէաները: Եւ այն Պետրոս առաքեալը, որին երբ հարցնում են թէ դու էլ Քրիստոսի հետևողներից ես, նա երեք անգամ «ուրացաւ երդմամբ, թէ ոչ գիտեմ զայրն», երանի է տալիս նրան, ով Քրիստոսի համար կշարշարուի, նախատինքի կենթարկուի. «Իսկ եթէ նախատիցիք ևս վասն անուան Քրիստոսի, երանելի էք:» (Ա. Պետ. Գ. 14): Այն առաքեալները, որոնք վտանգի ժամանակ իրենց վարդապետին թողին և փախան, այլևս երկիւղ չեն ճանաչում: Պօղոս առաքեալը որ հալածող էր Գողգոթայի վերայ բարձրացած խաչի մինչև անգամ ամենահեռաւոր երկրներում անգամ և, քրիստոնեաներին հալածողներից ամենաանագորոյն անձնաւորութիւնն է եղել, բացականչում է այժմ. «Արդ ո՞վ մեկնեցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի, նեղութիւնն թէ անձկութիւնն, թէ հալածանք... ոչ մահ, և ոչ կեանք, և ոչ հրեշտակք, և ոչ իշխանութիւնք... և ոչ այլ ինչ արարած կարէ մեկնել զմեզ ի սիրոյ անսի Աստուծոյ, որ ի Քրիստոս Յիսուս ի Տէր Մեր» (Հռովմ. Ը. 35-39):

Գողգոթայի վերայ բարցրացած խաչը առաքեալներին այնպիսի ոգի է ներշնչում, որ նրանք ոչ միայն չեն վախենում հրէաստանում Խաչեցեալ Քրիստոսին քարոզելու, այլ և համարձակ դուրս են գալիս հռովմէացւոց պետութեան դէմ, սասանեցնում նրա հիմքերը, խորտակում հեթանոս աշխարհի պարիսպները և քրիստոնէութեան առաջ ճանապարհ հարթում:

Բաւական է առաջ բերել Պօղոս առաքեալի կրած շարշարանքը մի պատկեր տալու համար թէ բոլոր առաքեալները ինչ գոհարերութիւն են արել իրենց առաջ դրուած մեծ գաղափարն իրականացնելու համար: «Ի հրէից հնդիցս քառասուն միով պակաս արբի. երիցս ծաղկեցայ, մի անգամ քարկոծ եղէ. երիցս նաւակոծ եղէ. զտիւ և զգիշեր յանդունդս տառապեցայ. ի ճանապարհս՝ բազում անգամ վիշտս ի դետոց, վիշտս՝ յաւազակաց... ի ջանս, և ի վաստակս, ի տքնութիւնս՝ բազում անգամ ի քաղց և

ի ծարաւ... Թող դալ չեղութիւնսն, և զի հանապաղ խուժանն ի վերայ իմ կուտէր...» (Բ. Կորնթ. ԺԱ. 24 — 33): Առաքեալը ոչ մի դէպքում առիթ չէ փախցնում ցոյց տալու, որ, այն ինչ որ իրենք կատարում են, այդ իրենք չեն անում, այլ իրենց մէջ բնակուած Քրիստոսի հոգին: Ցոյց են տալիս, որ իրենք ազէտ էին. «Զի ոչ բազում իմաստունք ըստ մարմնոյ և ոչ բազում հզօրք, և ոչ բազում ազնուականք, այլ գլխաւորաւ աշխարհի ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ զիմաստունս... և զտկարս աշխարհիս ընտրեաց Աստուած զի յամօթ արասցէ զհզօրս.» (Ա. Կորնթ. Ա. 26 — 28): Առաքեալների գիմաց հզօր պետութիւններ էին կանգնած, իսկ իրենք մարմնով թոյլ, անզօր մարդիկ էին, սակայն՝ «Եթէ ի մեր կոյս է Աստուած, ո՞վ իցէ մեր հակառակ,» ասում է Պօղոս առաքեալը: Եւ մի օրհասական կոիւ է սկսում քրիստոնէութեան ու հեթանոսութեան մէջ: Վերջինս հանդէս է բերում իւր լիզիօնները և կատաղութեամբ աշխատում է ջարդել, փշրել նորակազմ քրիստոնէութիւնը: Քրիստոնէութիւնը հսկայական քայլեր է անում և գողգոթայի վերայ բարձրացած խաչը գղրկեցնում է ամբողջ Պաղեստինը, Հռովմէական պետութիւնը և շրջակայ երկրները: Առաքեալները քրիստոնէութիւնը ամէն տեղ տարածելով երկնային սիրով կապեցին ամէնքին թէ միմիանց և թէ Աստուծոյ հետ: Կազմուեցին առանձին առանձին համայնքներ, որոնք մի ընդհանուր գաղափարի տակ վառ էին պահում իրենց մէջ Փրկչի սիրոյ աւանդը:

«Զի դուք երթայցէք և պտղաբերք լինիցիք...»: Եթէ մենք վերցնեք եկեղեցւոյ պատմութիւնը և մանրագննին կերպով քննութեան ենթարկենք, նրա ամէն մի էջի պատմութիւնը նահատակների արեամբ շաղախուած կտեսնենք: Հազարաւոր մարդիկ այրուեցին, նահատակուեցին, խաչի վերայ բեռուեցին, և այդ ամէնը տարան նրանք «ի սիրոյն Քրիստոսի»: Նրանց համար տանջանք, չարչարանք կրել ոչինչ բան էր, որովհետեւ իրենց Տէրն էլ չարչարուել էր: Առաքեալները անվեհեր ճակատով հզօր կայսրների դէմ

դուրս գալով նրանց հալածանքներին միայն պատասխա-
նում էին. «Մեք քարոզեսցուք զխաչեցեալ Քրիստոս,
Հրէից գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն.»
(Ա. Կորնթ. Ա. 23): Առաքեալների և քրիստոնեայ նա-
հատակների արեամբ սնուած երկիրը բուսցնում է նրանց
ցանած սերմերը և քրիստոնէութեան դրօշակը ծածանում
է հեթանոս աշխարհի վերայ: Քրիստոնէութիւնը յաղթու-
թիւն է տանում և այսօր աշխարհի մեծ մասը ծունր է չո-
քում Գողգոթայի թաշի առաջ:

Ա. Գ.

